Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի քաղաք Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների զարգացումը «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում»:

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Ռիմա Անանյան

2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3
Հետազոտական աշխատանքի արդիականությունը----------4
Նպատակը և խնդիրները----------5
Պատմական ակնարկ---------- 5
Կարողունակությունները---------- 6
Սեփական փորձառությունից----------7
Եզրակացություններ, առաջարկություններ----------21
Օգտագործված գրականության ցանկ----------22

Ներածություն

<<Մեր գործն է՝ սովորել ու սովորել, ձգտել կուտակել հնարավորին չափ շատ գիտելիքներ, որովհետև հասարակական լուրջ հոսանքներն այնտեղ են, որտեղ գիտելիքներն են, և ապագա մարդկության երջանկությունը միայն գիտելիքներում է:>>(Ա. Պ. Չեխով)

Բնությունն ամեն ինչի մասին այնպես է հոգացել, որ ամեն տեղ սովորելու բան կգտնես, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է տիրապետի գիտելիքը սովորողին փոխանցելու նուրբ արվեստին:

Բոլոր ժամանակներում ուսուցչի ամենամեծ գնահատականը աշակերտի ձեռքբերումն է. աշակերտի գնահատականը ուսուցչի կատարած աշխատանքի արդյունքն է, իսկ ուսուցչի համար իսկական պարծանք է, երբ հաջողում է նա, ում համար ջանք ու եռանդ չես խնայել :

Շատ կարևոր է, որ ուսուցիչը, հասկանալով աշակերտի տրամադրվածությունը և հաշվի առնելով նրա ունակությունները, կարողանա հասնել ցանկալի վերջնարդյունքի:

Դասընթացի ժամանակ ուսուցիչը պարտավոր է ապահովել աշխույժ և հետաքրքրող մթնոլորտ՝ հենվելով սովորողի հետաքրքրությունների, ունակությունների, պահանջմունքների վրա: Ուսուցիչը պետք է կարողանա այնպես անել ,որ սովորողը ինքնուրույն գործունեության հիման վրա վերարտադրի իր ընկալած գիտելիքը:

Ուսուցիչը, անընդհատ աշխատելով աշակերտի հետ, տարբեր մեթոդների ու հնարների օգնությամբ ավելի է կատարելագործում իր մասնագիտական գործունեությունը, դասավանդումը դարձնելով առավել հետաքրքիր, բազմազան և արդյունավետ: Դասավանդումը հետաքրքիր է, երբ աշակերտը գործնական կիրառման միջոցով է ընկալում թեման, և այդպիսի առարկա է հենց տեխնոլոգիան:

Տեխնոլոգիան իրերի պատրաստման և գործածման գիտությունն ու արվեստն է: Միայն մարդն է ընդունակ աշխարհի նյութերը վերափոխելով ստեղծել կյանքի համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր և համակարգեր:

Տեսնելով, թե մարդն ինչի կարիք ունի, նա գտնում է դրա բավարարման նորանոր միջոցներ, հասկանում պատահական հայտնագործությունների

կարևորությունը:

Տեխնոլոգիան ընդհանուր առմամբ կապված է գիտական գիտելիքների և ճարտարագիտության հետ; Այնուամենայնիվ, տեխնոլոգիան ցանկացած հասկացություն է, որը կարող է հեշտացնել կյանքը հասարակության մեջ, կամ որը թույլ է տալիս բավարարել անհատական կամ կոլեկտիվ պահանջները կամ կարիքները ՝ հարմարեցված որոշակի ժամանակի պահանջներին:

Մյուս կողմից, տեխնոլոգիան վերաբերում է նաև գիտական առարկային, որը կենտրոնացած է հումքը օբյեկտների կամ օգտակար ապրանքների վերածելու համար օգտագործվող տեխնիկայի և ընթացակարգերի, սարքերի և գործիքների ուսումնասիրության, հետազոտման, զարգացման և նորարարության վրա:

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է: Նախաձեռնողականության և ստեղծարարության տեխնոլոգիական մոտեցումն իբրև համընդհանուր ալգորիթմ որոշում է ուսումնական առարկայի նպատակը: Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

Տեխնոլոգիայի ուսուցումը, տարրական դպրոցից սկսած,ընդլայնում է սովորողների մտահորիզոնը, զարգացնում է նրանց ստեղծագործական ունակությունները, ինչպես նաև ձևավորիում է տեխնոլոգիական մշակույթ:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա ՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ : Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու , տեղաշարժվելու կարողությունը : Այսպիսով , նմանատիպ մասնագետներից պահանջվում է տեսական գիտելիքների

իմացություն , դրանք կիրառելու կարողություն և հմտություն , դիրքորոշում : Կարևորվում է այն , որ աշակերտը ուսումնական հաստատությունից դուրս գա այնպիսի գիտելիքներով , որոնք նա կկարողանա կիրառել գործնականում : Արդեն վաղուց առաջին տեղում չեն այն տեսական գիտելիքները , որոնք կիրառելի չեն գործնականում : Հատկանշական է , որ աշակերտը ,ստանալով տեսական գիտելիքներ, կատարի ճշգրիտ վերլուծություն, կայացնի ինքնուրույն ու ռացիոնալ որոշումներ և գտնի կիրառման արդյունավետ ուղիները:

Նպատակը և խնդիրները

Հետազոտական աշխատանքի նպատակն է տեխնոլոգիայի ժամերին միջին դպրոցի աշակերտների մոտ ուսումնասիրել նախաձեռնողականության, ինքնուրույնության, ստեղծագործ ունակությունների ձևավորումը և զարգացումը գործնական աշխատանքների միջոցով:

Աշխատանքի նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել խմբային-գործնական աշխատանքներ,
- իրականացնել ինքնուրույն-գործնական աշխատանքներ,
- վերլուծել կատարված աշխատանքների արդյունքները

Հետազոտական հարց

Արդյո՞ք հնարավոր է տեխնոլոգիայի ժամերին միջին դպրոցի աշակերտների մոտ զարգացնել նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործ ունակությունները գործնական աշխատանքի միջոցով:

Պատմական ակնարկ

Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել եմ մի քանիսին, ովքեր ուսումնառության 4 մեջ կարևորություն են տվել գործնական աշխատանքներին Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի Նա գտնում էր, որ հարկավոր է ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների գործնական ուղղվածությանը և զարգացնել դրանք Թ. Մորին, Թ. Կամպանելլային, Սեն-Սիմոնը, Շ. Ֆուրյեին, Ռ. Օուենին այն կարծիքին էին , որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն, սակայն ուշադրության կենտրոնում հարկավոր է պահել գործնական ուղղվածությունը1 Ե. Ա. Գոլանտը, Ս. Ի. Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական և գործնական Դասակարգելիս հիմք են ընդունել ինֆորմացիայի ըմբռնման բնույթը2 Մ. Սկատկինը և Ի. Յա. Լերները հիմք ընդունելով կրթության բովանդակության յուրացման մեջ սովորողների իմացական հնարավոր բնույթը, առանձնացրել են ուսուցման հետևյալ մեթոդները՝ բացատրական- ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական:

<<Տեխնոլոգիա>> առարկայի շրջանակում իրականացվող գործնական աշխատանքները հիմնականում կրում են բացատրական- ցուցադրական և վերարտադրողական բնույթ:

Կարողունակությունները

Շատ կարևոր է, սկսած տարրական դասարաններից, ոչ միայն պահպանել աշակերտների ճանաչողական գործունեության և սովորելու մոտիվացիայի բարձր մակարդակը, այլև պայմաններ ստեղծել, որպեսզի նրանք ձեռք բերեն կրթական կարողունակություններ: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Կարողունակություններն ութն են, բայց իմ հետազոտական աշխատանքի համար տեխնոլոգիա առարկայի շրջանակում ուսումնասիրել եմ դրանցից երեքը: Դրանք են՝ սովորել սովորելու կարողունակությունը , մշակութային կարողունակությունը և տնտեսական կարողունակությունը :

- Սովորել սովորելու կարողունակությունն աշակերտների մոտ ձևավորվում է աշակերտների՝ կյանքի տարբեր իրավիճակներում միայնակ կամ ուրիշների հետ աշխատելիս: Աշակերտները կարողանում են գնահատել սեփական և ուրիշների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվախության պայմաններում:Սովորելու ընթացքում աշակերտը ձևավորում է հարցին քննադատաբար ուսումնասիրելու,վերլուծելու,ինչպես նաև նորանոր մոտեցումներ ցուցաբերելու ունակություններ:
- Հանրակրթական դպրոցներում դասավանդվող բոլոր առարկաներն այս կամ այն չափով առնչվում են մշակույթի տարրերի և գործառույթների ուսումնասիրմանը՝ ձևավորելով համապատասխան գիտելիքներ, հմտություններ, դիրքորոշումներ և արժեքներ: Առավել վառ արտահայտված և ուղղորդված մշակութային կրթություն իրականացվում է «Արվեստ- արհեստ» բնագավառի առարկաների շրջանակներում:

  Մշակութային կարողունակությունը ձևավորվում է, երբ սովորողը ուսումնասիրում է հայ մշակույթը, արժևորում ինքն իրեն, իր ընտանիքը, համայնքի և պետության դերը: Աշակերտը, ուսումնասիրելով իր և օտարերկրյա մշակույթը, ձևավորում է իր նախասիրությունները : Նրանք կարող են զարգացնելսեփական մշակությային գեղագիտական պատկերացումները՝ ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը:
- տնտեսական կարողունակությունը զարգանում է, երբ աշակերտները վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները:

Սեփական փորձառությունից

Ձեզ եմ ներկայացնում իմ կատարած հետազոտությունն անցկացրած գործնական դասերի օրինակներով:

Դաս 1

Թեմա՝ Գորգագործություն և կարպետագործություն

Նպատակը- Ծանոթացնել գորգի և կարպետի համադրությամբ պայուսակների պատրաստման եղանակների:
Խնդիրները-

1. Գորգի և կարպոտի համադրությամբ ստողծել փոքրիկ պայուսակներ
2. Զարգացնել բիզնես գաղափարը
3. Վերլուծել աշխատանքները , արտահայտել սեփական կարծիքը
4. Ներկայացնել հայտնի գորգեր , ուսումնասիրել աշխատանքների գունային մոտեցումները

Վերջնարդյունք-

1. Ստեղծել իրատեսական արվեստի աշխատանքներ
2. Վերլուծել իր և ենկերների աշխատանքները բոլոր մանրամասնություններով
3. Ցույց տալ աշխատանքի լավ և վատ կողմերը
4. Ներկայցնել զարդանաձշի տեսակները
5. Ներկայացնել գույների նշանակությունը
6. Ներկայացնել թելերի տեսակները և որակները
7. Ներկայացնել պատրաստված կարպետագործ իրի տեսակները և օգտագործման եղանակները

Անհրաժեշտ նյութերը-
Տորք-դազգահ,դանակ, մկրատ, սանր, հենքաթել , միջնաթել,գունավոր թել, էսքիզ, շղթա ,կտոր:

ԿՏՈՒՏ
ԴԱՆԱԿ
ՄԿՐԱՏ
ՍԱՆՐ

ՀԵՆՔԻ ԹԵԼ

ԳՈՐԾԱԹԵԼ

ՏՈՐՔ-ԴԱՉԳԱՀ

ՄԻՋՆԱԹԵԼ

Դասի ընթացքը-

Զրույց գորգ-կարպետ գործվածքների տեսակների մասին:

Աշխատանքների վերլուծություն և քննարկում աշակերտների հետ:Քննարկել ինչպիսի տպավորության է թողնում և ինչ զգացում է առաջացնում:

Պատմական ակնարկ. Գորգը և կարպետը մեր նախնիներից մեզ հասած արվեստի տեսակ է: Մ. թ. ա 5-3րդ դարերում գորգագործության արվեստը սկսել է զարգանալ, այդ ժամանակաշրջանի գորգերից է <<Պազիրիկ>>ը, որը համարվում է աշխարհի ամենահին գորգը:

Հնում շատ թագավորների հարստությունը չափել են իրենց ունեցած գորգի քանակով :

Աղջիկների օժիտում պարտադիր պետք է լիներ իրենց ձեռքով գործած գորգ,այսինքն հարսնացուները պետք է պարտադիր գորգ գործել իմանային:
Գործելու ընթացքը. Գորգը կամ կարպետը գործելու համար պետք է նախապես ունենալ էսքիզ , որը աշխատանքի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում:
Էսքիզը նախապես նկարված գորգ է , որը նկարված է հատուկ վանդակավոր թերթի վրա: Էսքիզը նկարելուց հետո հաշվվում է վանդակների քանակը , այնուհետև հենքաթելի օգնությամբ հիմնվում է դազգահի վրա:
Հենքաթելը բամբակյա խիտ ոլորված թել է , որը դեռևս հին ժամանակներից համարվում է ամեամուր թելերից մեկը: Եթե հենքաթելը մաքուր բամբակյա չէ , ապա աշխատանքը արժեզրկվում է շուկայում և շոտ կարող է պատռվել:
Միջնաթելը նույն հենքաթելն է , պարզապես կեսով չափ բարակ է : Գորգի դեպքում միջնաթլը օգտագործում են ոչ միային ցորենը գործելու համար , այլ նաև ամեն շարքից հետո:
Էսքիզը պատրաստ է, տրքը հինված է , թելերը ընտրված է արդեն կարող ենք գործել գորգ կամ կարպետ: Գորգը կարպետից տարբերվում է իր խավով:
Հինելուց հետո սկսում ենք գործել միջնաթելով <<ցորեն>>ը : Ցորենը գործում են մինչև գույնով սկսելը, կարպետ գործելու տեխնիկայով, առանց խավի: Դրանից հետո սկսում ենք աշխատել գունավոր թելերով :
Գունավոր թելերը պետք է ընտրվեն միանման հաստությամբ և որակով , որպեսզի աշխատանքը անհարթ չլինի:
Արդյունքում երեխաները կարպետից և գորգից պատրաստում են զանազան օգտագործման իրեր, օրինակ՝ հագուստ , պայուսակ , գոտի, գլխարկ:

Թեմա՝ Հուլունք

Նպատակը_

- Ծանոթացնել հուլունքագործություն տարբեր տեխնիկաներին
- Զարգացնել մասնավորապես ծաղկեփնջի և կրծազարդի տեսակները
- Զարգացնել բիզնես մտածելակերպ

Խնդիրները_

- Սովորեցնել հուլունքներով ստեղծել գեղեցիկ հուշանվերներ
- Մետաղյա ձողով կարողանան հավաքել ծաղկաթերթիկներ
- Տարբեր նյութերով պատրաստել փոքրիկ դեկորատիվ ծաղկամաններ
- Կարողանան իրենց աշխատանքով գումար վաստակեն

Ակնկալվող վերջնարդունքը_

- Օգտագործել տարբեր որակի և մեծության հուլունքներ
- Թվարկել կատարած աշխատանքի հերթականությունը
- Ստեղծել վաճառքի համար նախատեսված ծաղկային փնջեր
- Կարողանա գնավորի կատարած աշխատանքը, ըստ ծախսած գումար

Անհրաժեշտ նյութերը_ Հուլունք, մետաղյա ձող, թել, ասեղ, դեղահաբի շիշ , թուղթ, սոսինձ

Դասի ընթացքը_ Աշակերտների հետ զրուցել հուլունքագործություն մասին: Բացատրել կատարվող աշխատանքի հերթականությունը: Ցույց տալ ինչպես օգտագործել մետաղյա ձողը, որպեսզի ավելի կոկիկ և սահուն ընթանա աշխատանքը: Բացատրել օգտագործված իրերով գումար վաստակելու մեթոդները: Խմբի անդամներով տոնի նախօրեին պատրաստում ենք վաճառքի համար նախատեսված աշխատանքներ: Ծախսում ենք ընդամենը 500 դրամ , գնում ենք միայն հուլունք, մնացած իրերը վերցնում ենք տնից, վաճառում 2000 դրամով:

ORIGINAL

ORIGINAL

ORIGINAL

Mili

Թեմա՝ Մաքրամեից դեկորատիվ ավել

Նպատակը_և խնդիրները

Սովորեցնել չափումների օգնությամբ ճիշտ բաշխել թելերի քանակը
Ձևավորել գունային ճաշակ
Ընդլայնել սովորողների երևակայությունը տարբեր նյութերով աշխատելու ժամանակ
Պատկերացում կազմել բիզնես ծրագրերի մասին
Համագործակցել խմբի անդամների հետ

Վերջնարդյունք_

Խմբերի ավագները վերլուծելով իրենց կատարած աշխատանքները ըստ աշխատանքի գրավչություն, այն գնավորում են ,որպեսզի տեղափոխեն խանութ-սրահ՝ վաճառք իրականացնելու նպատակով: Վաճառելու արդյունքում պարզ է դառնում, որ աշակերտը, ծախսելով քիչ գումար, աշխատում է չորս անգամ ավելի: Անհրաժեշտ նյութեր. _ Թել, մկրատ, սոսինձ, զարդարելու համար աքսեսուարներ Դասի ընթացք_ Դասի ընթացքում աշակերտներն բաժանվում են խմբերի, ընտրվում է ավագներ և գործնական աշխատանքի շնորհիվ պատրաստում են փոքրիկ դեկորատիվ հուշանվերներ ավելների տեսքով' անասնակերի համար նախատեսված հակի վրայի կապված թելից: Սկզբում թելերը բաժանում են հավասար մասերի, ապա խմբի անդամները իրար օգնելով սկսում են հյուսել մաքրամեի հյուսվածքներով: Մաքրամեն գործվածքի տեսակ է , որով պատրաստում են զանազան կիրառվող իրեր, օրինակ ' շարֆիկներ, պայուսակներ, թևնոցներ և այլն:

Աշխատել եմ 6_րդ դասարանցիների հետ: Նրանք 17 աշակերտից բաղկացած կիսված դասարաններ են, որոնց բաժանել եմ 4 անձից բաղկացած խմբերի : Խմբերում ընտրվեցին ավագներ , ովքեր կատարեցին աշխատանքի բաժանում, կատարման դերաբաշխում, ընդ որում վերջինը կատարեցին հաշվի առնելով խմբի աշակերտների ընդունակությունը: Դասարանում կային աշակերտներ, ովքեր ցանկացան աշխատել առանձին՝ իրենց իսկ նյութերով: Նրանք այն երեխաներն էին, ովքեր ինքնուրույն կարողանում էին աշխատել, նույնիսկ աշխատանքի բովանդակության հետ կապված նոր գաղափարներ առաջարկել :
Ոգևորությունն այնքան մեծ էր, որ աշակերտերը ստեղծեցին լոգոտիպեր , փակցրին աշխատանքին ու վաճառքի հանեցին:

PARADISE
SUMMER ADVENTURE

Եզրակացություն և առաջարկություններ

Վերլուծելով հետազոտական դասերը, եկա այն եզրակացության, որ գործնական աշխատանքների իրականացման ժամանակ աշակերտների մոտ ձևավորվում են ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորելու կարողությունները, նրանք կարողանում են ինքնակազմակերպվել, արդյունավետ կառավարել նաև ժամանակը, ճանաչել և գնահատել սեփական և մյուսների հնարավորությունները, ձևավորել ստեղծագործական և նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Գործնական աշխատանքների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում են սեփական նախասիրություններ, մասնավորապես՝ ազգային, մշակութային արժեքների վերաբերյալ: Նրանք սկսում են արժևորել հոգևոր ժառանգությունը, ձևավորում են մշակութային գրագիտություն և ճաշակ:

Համոզվեցի, որ աշակերտների մոտ զարգանում են իրենց արտադրանքը գնահատելու, ծախսերը հաշվարկելու և վաճառելու տնտեսական կարողությունները:

Առաջարկություններ

- Տեխնոլոգիայի ժամերին հաճախակի իրականացնել գործնական աշխատանքներ
- Գործնական աշխատանքների ժամերին հատուկ ուշադրություն դարձնել հայկական մշակույթին ու արվեստին և ներկայացնել ծագման և զարգացման պատմությունը
- Հնարավորություն տալ աշակերտներին գործնական աշխատանքի թեմաների ընտրության հարցում արտահայտել սեփական կարծիքը, նախաձեռնողականություն ցուցաբերել:
- Բնատուր օժտվածություն և մշակույթի ու արվեստի նկատմամբ հակումներ ունեցող աշակերտներին հնարավորություն տալ ինքնուրույն աշխատելու, նաև խմբային աշխատանքների ժամանակ ուսուցանողի դերը ստանձնելու հարցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, «Մեթոդական աշխատանքը դպրոցում», ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.:
2. «Տեխնոլոգիա» 6-րդ դասարանի դասագիրք /Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վարդանյան/: Երևան «Տիգրան Մեծ» ,2015թ.
3. Տեխնոլոգիա առարկայի հանրակրթական դպրոցի նոր չափորոշիչ և ծրագիր
4. «Տեխնոլոգիա» ուսուցչի ձեռնարկ 5-7-րդ դասարաններ, Հ. Սահակյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան: Երևան, «Տիգրան Մեծ»,2014 թ.